

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ԱՐԹՈՒՐՈ ԳԱՐԱԿՈԶԼՈՒԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՆԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՅԵԱՆ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՄՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱՐԹՈՒՐՈ ԳԱՐԱԿՈԶԼՈՒ,
ՈՐ Ի ԲՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ, ԱՐԳԵՆՏԻՆԱ**

Նամագգային մեր հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ, Նայրապետական Մեր օրհնութիւնը, սէրն ու ջերմ բարեմաղթանքները:

Սիրելի պրն Գարակօղլու,

Արգենտինայի հայոց թեմ կապարած Նովուայետական Մեր այցելութեան ընթացքին առիթ ունեցանք ի մոտոյ ճանաչելու Ձեզ եւ աստուածահաճոյ բազում գործերով վաստակեալ յարգանք ու հեղինակութիւն վայելող Ձեր ծնողներին՝ սիրելի Գեորգ եւ լուսահոգի Վերա Գարակօղլուներին: Արդարեւ, ազգային-եկեղեցական մեր կեանքում Գարակօղլու ընտանիքի իրագործումները բարի վկայութիւններ են ներշնչեալ հաւատարմութեան, իրաւագասիրութեան ու հայրենասիրութեան, որի հերթական դրսեւորումը եղաւ Ձեր ծնողաց սրբաբառիս յանձնառութիւնը՝ հովանաւորելու Գիւմրիի Սուրբ Աստուածածին եկեղեցու վերանորոգումը՝ մեծ աւանդ բերելով Մայր Նայրենիքում հոգեւոր կեանքի վերագարթօնքին:

Գարակօղլու ընտանիքի բարի աւանդները այսօր ծաղկում ու արգասաւորում են նաեւ զաւակների գործերով: Նովուայետական այցի օրերին մայրաքաղաք Բուէնոս Այրեսի «Արմենիա» հրապարակում Մենք՝ մասնակցեցինք հայկական խաչքարի զետեղման արարողութեանը, որը կեանքի կոչուեց Ձեր եւ Ձեր ընտանիքի զեղեցիկ նախաձեռնութեամբ՝ իբրեւ խորհրդանիշ հայ-արգենտինական բարեկամութեան: Երկար փարիներ Դուք ծառայել էք որպէս Վիսենթէ Լոփէսի Սուրբ Գեորգ եկեղեցու եւ Նայ դպրոցի հոգաբարձուների խորհրդի արեւնապետ, հոգեւոր դասի հեւր միասին ներդնելով Ձեր ջանքերը, որպէսզի մայրենի լեզուն շարունակի ապրել հայ մանուկների շուրթերին եւ յարապետի հայ կեանքը Արգենտինայում, զօրաւոր լինի մեր ժողովրդի զաւակաց որդիական սէրն ու նուիրումը հանդէպ Մայր Եկեղեցին եւ լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Յարգարժան պրն Գարակօղլու, բարձր գնահատելով Ձեր ծառայութիւնները մեր Եկեղեցուն, սիրով ընդառաջում ենք Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գիսակ արքեպիսկոպոս Մուրադեանի ազնիւ խնդրանքին եւ Նայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

պապտոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրբի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը հաւաքոյ մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ պարգեւի Ձեզ բաջառողջ արեւշարութիւն եւ եկեղեցաշէն գործերի յաջողութիւններ:

Թող Բարին Աստուած Իր սիրոյ ու խնամքի մէջ պահի մեր Սուրբ Եկեղեցին, հանապազ օրհնի եւ Իր բազում պարգեւներով առաքապէս շնորհազարդի մեր Եկեղեցու բոլոր բարեպաշտ հաւաքացեալներին:

Ողջ լերութ ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Նոգոյն եւ յաւեր օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 12-ն Յունուարի
յամի Տեառն 2005 եւ ի թուին հայոց ՌՆԾԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 279